


Հաստատում եմ՝

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

 Սերգեյ Առաքելյան
« 03 » _____ 12 2021թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արտակ Արմենի Ղազարյանի

«Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունները քրեական դատավարությունում» ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետազուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Թեկնածուական ատենախոսությունը նվիրված է քրեական դատավարությունում մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, այդ թվում՝ իդեալական մեղադրական դատավարությունում մեղադրանքի կազմակերպման տեսական հնարավորություններին, մասնավոր մեղադրանքին՝ իբրև մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակ, դրա տեսակներին ու նշանակությանը, մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող տեսություններին և դրանցից բխող հետևություններին, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումներում մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտները հիմնավորող տեսությունների իմպլեմենտացիային:

Ատենախոսը փորձ է կատարել մշակել գիտական այնպիսի աշխատանք, որը, ըստ էության, կհանդիսանա ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հայրենական իրավագիտության մեջ առաջին համապարփակ գիտական հետազոտությունը:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը «մասնավոր մեղադրանքի գործերի» և մասնավոր մեղադրանքի կապակցությամբ ծագող դատավարական հարաբերություններն են: Հետազոտության առարկան «մասնավոր մեղադրանքի գործերի» և մասնավոր մեղադրանքի հարաբերությունները կարգավորող միջազգային և ներպետական իրավական նորմերն են, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումները, իրավակիրառ պրակտիկան, միջազգային փորձը և դոկտրինալ աղբյուրները:

Հեղինակը փորձել է բացահայտել մրցակցային (մեղադրական) դատավարությունում մեղադրանքի կազմակերպման հնարավորությունները՝ հստակորեն որոշելով մասնավոր մեղադրանքի տեղը դատավարության այդ մոդելում, տարանջատել մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակները՝ հստակ որոշելով տարանջատման հիմքը, տարբերակել մասնավոր մեղադրանքի տեսակները, բացահայտել դրանցից յուրաքանչյուրի բնորոշ գծերը, առանձնահատկությունները, մասնավոր մեղադրանքի նշանակությունը, հստակորեն տարանջատել մասնավոր մեղադրանքի և մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտները միմյանցից՝ որոշակիություն մտցնելով դրանց փոխապայմանավորվածության հարցերում, վերհանել քրեական դատավարության տեսության մեջ առկա «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտի գոյությունը հիմնավորող տեսությունները և դրանցից յուրաքանչյուրից բխող հետևություններ անել նշված գործերով մեղադրանքի կազմակերպման ու այլ առանցքային հարցերի առնչությամբ, բացահայտել մասնավոր մեղադրանքի և դիսպոզիտիվության, «մասնավոր մեղադրանքի գործերի» և տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտների հարաբերակցության հարցերը, կատարված հետազոտության արդյունքների հիման վրա վերլուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և Նախագծի

կարգավորումները, վեր հանել դրանց թերությունները՝ առաջարկելով հայեցակարգային լուծումներ:

Ընտրված հետազոտության թեմայի արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է տուժողի կողմից իրականացվող մեղադրանքի կազմակերպման հարցերի գիտական խորագնին ուսումնասիրման անհրաժեշտությամբ: Հարցի հրատապությունը առաջնային դեր է ստանում ներկայումս ընթացող դատաիրավական բարեփոխումների և հատկապես ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի համատեքստում, որով մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի՝ գործող օրենսգրքից էականորեն տարբերվող բոլորովին այլ մոդել է առաջարկվում ներդնել: Այս համատեքստում խիստ արդիական են դառնում մրցակցային դատավարությունում մեղադրանքի կազմակերպման, մասնավոր և պետական մեղադրանքի հարաբերակցության, մասնավոր մեղադրանքի և «մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտների ճիշտ փոխհարաբերակցության որոշման, այս ինստիտուտների էության ու նշանակության ճիշտ ընկալման և մի շարք այլ հարցեր, որոնք բացահայտելու շնորհիվ հնարավոր կլինի վեր հանել ՀՀ քրեական դատավարության թե՛ գործող, թե՛ նոր օրենսգրքի նախագծային կարգավորումների թեր և դեմ կողմերը՝ առաջարկելով համակարգային լուծումներ: Հաշվի առնելով նաև այն, որ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծային տարբերակում նույնպես տեղ են գտել հարցին առնչվող կարգավորումներ, ուստի նյութական և դատավարական օրենքների մեջ հակասություններ թույլ չտալու և դրանք ներդաշնակեցնելու անհրաժեշտությունը էլ ավելի է մեծանում: Բացի այդ, հայկական քրեական դատավարության տեսության մեջ թեմայով կատարված համակարգված ու ամբողջական ուսումնասիրության բացակայության հանգամանքը նույնպես մեծացնում է հետազոտության արդիականությունը:

Հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ ատենախոսությունը հայրենական իրավագիտության մեջ առաջին համապարփակ և ամբողջական գիտահետազոտական ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվել հնարա-

վորինս համալիր և բազմակողմանի քննարկել և վերլուծել մասնավոր մեղադրանքի ու մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտները և առաջարկել համալիր լուծումներ, որոնցով հնարավոր է խուսափել գործնականում առաջացող մի շարք խնդիրներից:

Ատենախոսության հեղինակը մանրամասն հետազոտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի համապատասխան ոլորտներին վերաբերող իրավական ակտերը, օտարերկրյա պետությունների քրեադատավարական օրենսդրությունները, դատական պրակտիկայի համեմատադրական վերլուծության, տարբեր աղբյուրներում տեղ գտած գիտական մոտեցումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, հայրենական դատավարական գրականության մեջ չուսումնասիրված այնպիսի հարցեր, ինչպիսիք են մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տեսակների հարաբերակցության հարցերը, մասնավոր մեղադրանքի տեսակների դասակարգման, մասնավոր մեղադրանքի և դիսպոզիտիվության կապի հարցերը, մասնավոր մեղադրանքի և մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտների հարաբերակցության հարցերը, մասնավոր մեղադրանքի գործերի ինստիտուտը հիմնավորող տարբեր տեսությունները, դրանցից յուրաքանչյուրից բխող տարբեր հետևությունները և այլն: Արդյունքում, կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել օրենսդրական առաջարկներ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, դրանցում ընդգրված 13 պարագրաֆներից, եզրակացությունից, օգտագործված գրականության և իրավական ակտերի ցանկից:

Ատենախոսության կառուցվածքը թույլ է տալիս հեղինակին համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակներով լուծել հետազոտության թեմայի վերաբերյալ առաջ քաշած խնդիրները: Աշխատանքը գրված է գրագետ, իրավաբանական լեզվով:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված գիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրատարակած թվով տասնմեկ հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Այսպիսով, ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտի և առարկայի ճշտությունը, նպատակները, տեսական և գործնական խնդիրների առաջարկվող լուծումները, ինչպես նաև հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը կասկած չեն հարուցում:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ աշխատանքի վերաբերյալ առկա են որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթում ատենախոսն իր հետևություններն արել է ֆրանսիական և գերմանական ինչպես գործող, այնպես էլ նախկինում առկա օրենսդրական կարգավորումների վերլուծության հիման վրա: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ նշված երկրները, որպես կանոն, իրավական համակարգով և արդարադատության պատմական զարգացմամբ ու չափանիշներով տրամագծորեն տարբերվում են հայրենականից: Նման պարագայում ներմուծված ցանկացած բարելավում պրակտիկայում կարող է նաև արդյունավետ չգործել, եթե նախապես մանրակրկիտ մշակված չեն այն գործածության մեջ դնելու պատշաճ մեխանիզմներ: Ուստի առաջնահերթ ենք համարում դիտարկել նաև դրա արդյունքում առաջ եկող հնարավոր ռիսկերը և դրանց կառավարումը:

2. Պաշտպանության ներկայացվող 10-րդ դրույթում հեղինակի կողմից իբրև հարցի լուծման տարբերակ առաջարկվում է ՀՀ քր.դատ.օր-ի 183-րդ հոդվածով նախատեսված գործերի շրջանակը պահպանել, սակայն այդ դեպքում արդեն «տուժողին գթալու» տեսությունից «դուրս» գտնվող, դրա գաղափարների հետ չհամընկնող գործերի (հանցագործությունների) վրա տարածել արդեն ընդունելի մյուս տեսության, այն է՝ «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսության գաղափարները և դրանից բխող հետևությունները: Այս դեպքում արդեն, թեև մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակը կմնա նույնը, բայց կփոխվի

դրանցով վարույթի (հետապնդման) կազմակերպման կարգը՝ կազմակերպվելով արդեն «պետական մեղադրանքի միջոցների խնայողության» տեսությունից բխող հետևությունների վրա (բացառելով բողոքը հետ վերցնելը, բողոքի երկատելիությունը, հանրայինից մասնավոր մեղադրանքի փոփոխությամբ գործի փոխակերպման դեպքում քրեական վարույթի (հետապնդման) դադարեցումը տուժողի բողոքի բացակայության դեպքում և այլն):

Հարցի այդօրինակ լուծման դեպքում, փաստորեն, պետք է ստեղծվի մասնավոր մեղադրանքի գործերի երկու առանձին շրջանակ՝ ամեն մեկն իր տարբերակված կանոնակարգումներով:

Կարծում ենք, որ վարույթի (հետապնդման) կազմակերպման երկու տարբեր կարգեր նախատեսելը նպատակահարմար չէ:

3. Պաշտպանության ներկայացվող 11-րդ դրույթում հեղինակն առաջարկում է բոլոր այն դեպքերում, երբ մասնավոր մեղադրանքի գործերով ինչ-ինչ պատճառով վարույթի հանրային մասնակիցները հարուցել են քրեական վարույթ (հետապնդում), ապա պետք է այն շարունակելու հնարավորություններ նախատեսել, քանի որ հակառակ պարագայում, առաջանում է հանրային ռեսուրսների անհարկի վատնման վտանգ՝ ինչը թոթափելու նպատակով էլ փորձ է արվել փոխել այս գործերով վարույթի կազմակերպման գործող մոդելը:

Հեղինակն իր եզրահանգումներում նշել է, որ վերոգրյալ դեպքերում, երբ վարույթը հարուցվել, նախաքննությունը գործարկվել է, այլ կերպ ասած, արդեն իսկ նախաքննության մարմնի ռեսուրսները ծախսվել են (օբյեկտիվ, թե սուբյեկտիվ պատճառներով), քրեական վարույթը կարճելու պահանջ նախատեսելը դառնում է ինքնանպատակ (չէ՞ որ մասնավոր մեղադրանքի նախագծային մոդելն ուներ նախաքննության ծանրաբեռնվածության թոթափման նպատակ):

Հետևաբար գտնում ենք, որ, եթե, նույնիսկ, որոշվի պահպանել նախագծային քննարկվող մոդելը, ապա առնվազն այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդման մարմինները ներգրավվել են քրեական վարույթին, տեղ է գտել նախաքննությունը, այն պետք է շարունակվի և այդ պարագայում պետք է նախատեսել քրեական հետապնդման հարուցում և իրականացում հանրային հետապնդման

կարգով: Բացի այդ, նշված մոդելը պահպանելու պարագայում, կարծում ենք, որ պետք է «նեղացվեն» մասնավոր մեղադրանքի գործերի շրջանակը նաև այն լույսի ներքո, որպեսզի ընտրվեն այնպիսի հանցագործություններ, որոնց առկայության մասին հնարավոր լինի խոսել առանց հանրային կարգով պարտադիր կերպով վարույթ հարուցելու:

Նման մոտեցումը, կարծում ենք, այնքան էլ հիմնավոր չէ, քանզի, ելնելով մասնավոր մեղադրանքի նախագծային մոդելի նպատակներից, այն է՝ նախաքննության ծանրաբեռնվածության թոթափման նպատակից, առնվազն այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդման մարմինները ներգրավվել են քրեական վարույթին, տեղ է գտել նախաքննությունը, այն չպետք է շարունակվի, քանի որ թեկուզև վարույթն արդեն իսկ սկսվել է, որոշակի ռեսուրսներ են ծախսվել, այնուամենայնիվ վարույթի կարճումը կնսպաստի նախաքննության ծանրաբեռնվածության թոթափմանը, և հանրային ռեսուրսների անհարկի վատնման վտանգ կառաջանա հենց վարույթը շարունակվելու պարագայում:

Պետք է նշել, սակայն, որ նշված նկատառումները կրում են մասնավոր և խորհրդատվական բնույթ, չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևաբար, Արտակ Արմենի Ղազարյանի «Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունները քրեական դատավարությունում» թեմայով ատենախոսական հետազոտությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն ուսումնասիրություն, որը ներառում է տեսության, օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Արտակ Արմենի Ղազարյանի «Մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի առանձնահատկությունները

քրեական դատավարությունում» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետազուգական գործունեության տեսություն) մասնագիտությամբ:

Ատենախոսությունը քննարկվել ու 2021 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 03-ը դրվել է գրավոր քվեարկության Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդում և արժանացել գիտական խորհրդի անդամների դրական եզրակացությանը: Ատենախոսության քննարկմանը մասնակցել են՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Առաքելյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Գաբուզյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահե Ենգիբարյանը, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահե Հովհաննիսյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Նիկողոսյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Սերգեյ Մարաբյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Կարեն Բիշարյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Աշոտ Հայրապետյանը, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Արտաշես Խուրշուդյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու Արշալույս Մինասյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Գևորգ Իսրայելյանը:

**Արդարադատության ակադեմիայի
գիտական խորհրդի քարտուղար,
իրավաբանական գիտությունների
թեկնածու, դոցենտ**



Գևորգ Իսրայելյան